Թիվ ՍՆԴ/0085/04/23 սնանկության գործով պարտապան Արամ Արթուրի Գասպարյանի սնանկության գործով գույքի բաց դասական եղանակով՝ լոտի մեկնարկային գնի հավելմամբ, աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-20 16:49:16

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Թիվ ՍՆԴ/0085/04/23 սնանկության գործով 15.03.2023թ. սնանկ ճանաչված Արամ Արթուրի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող թվով 1 /մեկ/ շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի, 2026թ. նոյեմբերի 19-ին, ժամը՝ 16:00-ին նշանակված աճուրդը չի կայացել:
2026թ. դեկտեմբերի 18-ին, ժամը՝ 16:00-ին, թիվ ՍՆԴ/0085/04/23 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան Արամ Արթուրի Գասպարյանի (ն/ք՝ 002545028, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա, 51շենք, բն.34) սնանկության գործով կառավարիչ Ա. Մաթևոսյանի կողմից ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի 15.03.2023թ. թիվ ՍՆԴ/0085/04/23 վճռով սնանկ ճանաչված պարտապան Արամ Արթուրի Գասպարյանի Դատարանի կողմից հաստատված պարտատերերի պահանջների բավարարման նպատակով, Արամ Արթուրի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող թվով 1 /մեկ/ շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի, աճուրդային վաճառքը՝ ներկայացված 1 /մեկ/ լոտով՝ ստորև ներկայացված մեկնարկային գնով:
Լոտ 1. «MERCEDES-BENZ S500L 4 MATIC» մակնիշի, 10 XT 100 հաշվառման համարանիշի, WDD2211861A275201 նույնացման համարով ավտոմոբիլ:
«MERCEDES-BENZ S500L 4 MATIC» մակնիշի, 10 XT 100 հաշվառման համարանիշի, WDD2211861A275201 նույնացման համարով, 2008 թվականի թողարկման տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիրն է՝ KB441556, տեսակը՝ մարդատար, թափքը՝ սեդան, գույնը՝ սև, շարժիչի տեսակը՝ բենզինային, անիվները՝միջին, անվահեծերը՝ ալյումինե, փականները, հայելիները և ապակիները, փոխանցման տուփը՝ ավտոմատ, սրահը՝ կաշեպատ, ղեկը՝ ձախակողմյան, քարշակը՝ լիաքարշակ, վազքը բացակայում է:
Տրանսպորտային միջոցի շարժիչը ենթակա է կապիտալ վերանորոգման (յուղ է

վառում)։
Ավտոմոբիլի տեխնիկական վիճակը միջինից ցածր է, ունի հարվածամեղմիչների (փուչիկների) փոխարինման կարիք, երկար ժամանակ չի շահագործվել, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ընթացամասերի զննության և որոշ դետալների (վռաններ և այլ ռետինե դետալներ) փոխարինման։ Նշված տրանսպորտային միջոցի փոխանցման տուփի, շարժիչի, էլեկտրական և անվտանգային ապահովման համակարգերի, համկարգճային ուղեղի աշխատանքին և որևէ հանգույցի և սարքավորման աշխատանքի վերաբերյալ որևէ երաշխիք կամ կանխատեսում չի տրվում։
Առկա են կիրառված սահմանափակումներ։
Լոտ 1-ի մեկնարկային գինն է 1,257,472 ՀՀ դրամ։
Յուրաքանչյուր չկայացած աճուրդից հետո, հաջորդ աճուրդին՝ կրկնաճուրդին, շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի մեկնարկային գինը /արժեքը/ նվազեցվելու է լոտի արժեքի /գնի/ նախորդ աճուրդի մեկնարկային գնից 20 /քսան/ տոկոսի չափով :
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ /հասցե՝ ք. Երևան, Օտյան 53/2/՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար։
Ծանոթություն. ԳՈՒՅՔԱՀԱՐԿ - ՀՀ հարկային օրենսգրքում 29.08.2026թ. կատարված փոփոխությունների համաձայն, անհրաժեշտ է գնորդի կողմից հարկերը մարված լինելու մասին տեղեկանք ներկայացնել պետական գրանցում իրականացնող մարմնին՝ նոր գնորդի անունով իրավունքի պետական գրանցում կատարելու համար։ Այսինքն, գույքի ձեռք բերողը կրում է պարտավորություն՝ աճուրդով գնված գույքի գույքահարկի գծով առկա բոլոր պարտավորությունների կատարման՝ պարտքերի վճարման համար, որից հետո նոր կգրանցվի նոր գնորդի սեփականության իրավունքը աճուրդով ձեռք բերված գույքի նկատմամբ։
Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Արամ Արթուրի Գասպարյանի անվամբ «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 2474402738340000 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև հայտ և/կամ ծանուցում ներկայացնելու պահը։ Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով, աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գինն առաջարկած մասնակիցը։
Աճուրդը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանի համաձայն՝ հրամանով սահմանված կարգով՝ ներառյալ ՀՀ արդարադատության

նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումների:
Նշված իրավական ակտը հանդիսանում է աճուրդի կանոնակարգը:
Աճուրդի մասնակցության ցանկություն ունեցող անձինք՝ հայտատուները, պետք է աճուրդի հետ կապված հարաբերություններում /գործընթացում/ առաջնորդվեն և ղեկավարվեն ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանով, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումներով:
Գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու, շարժական գույքի տեղափոխման ծախսերը և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից՝ իր ուժերով և միջոցներով:
Հայտի ձևը և աճուրդի կանոնակարգը անվճար կարող եք ստանալ սնանկության գործով կառավարչից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից 18:00-ն՝ ք. Երևան, Հանրապետության փ. 67շ., թիվ 57 գրաս. տարածք հասցեով կամ սնանկության գործով կառավարչին տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե, որին կուղարկվի հայտը: Էլեկտրոնային հաղորդագրության ձևաչափը նախընտրելի է: Լոտը կարող է ուսումնասիրվել ցանկացած աշխատանքային օր 09:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ նախապես պայմանավորվածություն ձեռք բերելով սնանկության գործով կառավարչի հետ:
Լոտը ուսումնասիրելու և աճուրդին առնչվող այլ հարցերով դիմել սնանկության գործով կառավարիչ Արմեն Մաթևոսյանին՝+374 96 224 228 հեռախոսահամարով կամ հաղորդագրությունը ուղարկել armen.matevosyan@lawconsult.am էլեկտրոնային փոստի հասցեին կամ այցելել ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեով:

273-1. Աճուրդի անցկացման և հայտերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն.pdf

37441224254

armen.matevosyan@lawconsult.am

-